



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

«ՀԱՅԿ ՄԱՄԻՋԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ 1998 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 290-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ԱՅՆՔԱՆՈՎ, ՈՐՔԱՆՈՎ ՉԻ ՆԱԽԱՏԵՍՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՉՀԵՌԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԻ՝ ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԱՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԱՌԱՐԿԱ ԼԻՆԵԼԸ, ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

30 մայիսի 2023 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող) Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝ Հայկ Մամիջանյանի ներկայացուցիչներ Ս. Պողոսյանի, Ա.Ձ Նավասարդյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Մ. Ստեփանյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայկ Մամիջանյանի դիմումի հիման վրա՝ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի՝ այնքանով, որքանով չի նախատեսում ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության անմիջական առարկա լինելը, Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

1998 թվականի ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է հուլիսի 1-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ նույն թվականի սեպտեմբերի 1-ին, ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից, ուժը կորցրել է 2022 թվականի հուլիսի 1-ին՝ բացառությամբ 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված (ՀՕ-306-Ն) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 483-րդ հոդվածով նախատեսված դեպքերի: Օրենսգրքի 54-54.4-րդ գլուխների դրույթներն ուժը կորցրած չեն ճանաչվել:

Օրենսգրքի՝ «Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների անօրինական և անհիմն որոշումների և գործողությունների բողոքարկումը դատարան» վերտառությամբ 290-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված է.

«Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից»:

Օրենսգրքի վիճարկվող դրույթը չի փոփոխվել և/կամ լրացվել:

Գործի քննության առիթը Հայկ Մամիջանյանի (այսուհետ՝ նաև դիմող)՝ 2023 թվականի մարտի 14-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Սահմանադրական դատարանի 2023 թվականի մայիսի 30-ի թիվ ՍԴԱՌ-52 աշխատակարգային որոշմամբ «Հայկ Մամիջանյանի դիմումի հիման վրա՝ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ այնքանով, որքանով չեն նախատեսում ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության անմիջական առարկա լինելը, Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը մասամբ՝ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 2-րդ մասի մասով, կարճվել է:

Ուսումնասիրելով դիմումը և կից ներկայացված դատական ակտերը, պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. Գործի համառոտ պատմությունը

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնի հատկապես կարևոր գործերով ավագ քննիչի՝ 2021 թվականի օգոստոսի 6-ի որոշմամբ թիվ 15971020 քրեական գործով մեղադրյալ Հ. Մամիջանյանի նկատմամբ կիրառված՝ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը վերացնելու վերաբերյալ պաշտպանի միջնորդությունը մերժվել է:

Նշված որոշման դեմ Հ. Մամիջանյանի պաշտպանի բողոքը Երևան քաղաքի դատախազության դատախազի՝ 2021 թվականի օգոստոսի 23-ի որոշմամբ մերժվել է:

2021 թվականի սեպտեմբերի 9-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է վերոնշյալ որոշումների դեմ

Հ. Մամիջանյանի պաշտպանի բողոքը, որով խնդրել է որոշում կայացնել Հ. Մամիջանյանի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին:

Երևան քաղաքի առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի հոկտեմբերի 14-ի որոշմամբ բողոքը մերժվել է: Դատարանի որոշման մեջ, մասնավորապես, նշված է. «Դատարանը փաստում է, որ չնայած չհեռանալու մասին ստորագրություն խափանման միջոցի կիրառման դեպքում մեղադրյալի այլ տեղանք մեկնելու կամ բնակության վայրը փոխելու հնարավորությունը, այնուամենայնիվ գտնում է, որ վարույթն իրականացնող մարմինն է լիազորված ինքնուրույն ուղղություն տալ քննությանը, ապահովել նախաքննության խնդիրների իրականացումը, այն է՝ բացահայտել քրեական օրենսգրքով արգելված արարք կատարած անձին, պարզել հանցանքի կատարման մեջ նրա մեղավորությունը, ինչպես նաև ապահովել այդպիսի անձի պատշաճ վարքագիծը, անհրաժեշտության դեպքում նաև նրա նկատմամբ դատավարական հարկադրանքի միջոցների կիրառմամբ: Մինչդեռ, դատարանը մինչդատական վարույթի նկատմամբ հետագա վերահսկողություն իրականացնելիս նման խնդիրներ չի հետապնդում:

Նման պայմաններում դատարանը գտնում է, որ մինչդատական վարույթի նկատմամբ վերահսկողության առարկա դարձնելով Հայկ Մամիջանյանի նկատմամբ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոց ընտրելու մասին որոշումը, դուրս կգա մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության թույլատրելի շրջանակներից և փաստացի հսկողություն կիրականացնի նախնական քննության նկատմամբ:

Թեև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում տեղ գտած կարգավորման համաձայն, այսպես կոչված, հետագա դատական վերահսկողությունը քրեական դատավարության մինչդատական փուլերում չի սահմանափակվում, այսինքն՝ հետագա դատական «միջամտությունը» նախնական քննության, դատախազության, օպերատիվ-հետախուզական մարմինների գործունեությանը ոչնչով սահմա-

նափակված չէ, այնուամենայնիվ, դատարանը գտնում է, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը փաստացի չի կարող վերածվել դատախազական հսկողությանը զուգահեռ մեկ այլ գործիքակազմի»:

Վերաքննիչ քրեական դատարանի՝ 2022 թվականի հուլիսի 21-ի որոշմամբ
 Հ. Մամիջանյանի պաշտպանի կողմից բերված վերաքննիչ բողոքը մերժվել է. թիվ ԵԴ/0753/11/21 գործով Երևան քաղաքի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի հոկտեմբերի 14-ի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի դեկտեմբերի 26-ի որոշմամբ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2022 թվականի հուլիսի 21-ի որոշման դեմ դիմող Հ. Մամիջանյանի ներկայացուցչի հատուկ վերանայման վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է: Վճռաբեկ դատարանի որոշման մեջ, մասնավորապես, նշված է. «Բողոքաբերի փաստարկների, սույն գործի նյութերի և Վերաքննիչ դատարանի բողոքարկվող որոշման պատճառաբանությունների համադրված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքաբերի կողմից չեն բերվել բավարար հիմնավորումներ, որ առերևույթ քրեադատավարական օրենքի էական խախտում թույլ տալու հետևանքով կայացված դատական ակտը կարող էր խաթարել արդարադատության բուն էությունը»:

2. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը գտնում է, որ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը՝ իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությամբ, այնքանով, որքանով չեն նախատեսում ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության անմիջական առարկա լինելը, հակասում են Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 75 և 80-րդ հոդվածներին, 81-րդ հոդվածի 1-ին մասին:

Մեջբերելով Սահմանադրական դատարանի, Վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք դիրքորոշումներ՝ դիմողը,

մասնավորապես, գտնում է, որ կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի կիրառումն ինքնին հանգեցնում է վերջիններիս ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակման, իսկ խափանման միջոցի կիրառումից անմիջապես հետո դրանից բխող՝ վարույթն իրականացնող մարմինների պարտադիր կատարման ենթակա գործողությունների արդյունքում գործնականում սահմանափակվում է նաև այդ իրավունքի իրականացման փաստացի հնարավորությունը:

Դիմողի կարծիքով՝ անձը, որի նկատմամբ կիրառվել է որպես խափանման միջոց ստորագրություն չհեռանալու մասին, որը, իր կարծիքով, ապօրինի է, և ոչ իրավաչափորեն սահմանափակվում է իր ազատ տեղաշարժվելու իրավունքը, իրավունք ունի դիմելու դատարան՝ խնդրելով պարզել այդ խափանման միջոցի կիրառման իրավաչափությունը, իսկ դատարանի պարտականությունն է քննել համապատասխան բողոքը և այն հիմնավոր համարելու դեպքում որոշում կայացնել անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին:

Անդրադառնալով մինչդեռ տական վարույթի ընթացքում վարույթն իրականացնող մարմնի որոշումների, գործողությունների և անգործության՝ հետաձգված բողոքարկման հնարավորության հարցին՝ դիմողը նշել է՝ «(...) քրեական դատավարության փուլային կառուցվածքն այնպիսին է, որ գործն առհասարակ կարող է չտեղափոխվել դատական քննության փուլ, այլ օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում՝ կարճվել, որպիսի պարագայում անձի իրավունքների և ազատությունների սահմանափակման դատական վերանայման հարցը կմնա առկախված: Միևնույն ժամանակ, եթե անգամ հետաձգված բողոքարկման հնարավորություն առկա լինի, ապա այդպիսի բողոքարկումն արդյունավետ չի կարող համարվել, քանի որ նույնիսկ բողոքի բավարարման դեպքում անձի խախտված իրավունքները և ազատությունները չեն կարող վերականգնվել ամբողջ ծավալով այն պատճառով, որ դատարանի որոշմամբ անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացվելու է այդ պահի դրությամբ, այլ ոչ թե այդ որոշման

կայացմանը նախորդող տևական ժամանակահատվածի համար: Ուստի, դատավարության ավելի ուշ փուլում՝ դատարանում գործն ըստ էության քննելիս, մինչդատական վարույթն իրականացնող մարմինների՝ անձի իրավունքները սահմանափակող որոշումների, գործողությունների և անգործության բողոքարկման նախատեսումը կհանգեցնի անձի դատական պաշտպանության իրավունքի անհամարժեք սահմանափակման:

Հետևաբար, մինչդատական վարույթում վարույթն իրականացնող մարմինների որոշումների, գործողությունների և անգործության հետևանքով անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակման իրավաչափությունը դատական կարգով ստուգման կարող է ենթարկվել մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կառուցակարգի շրջանակում»:

Դիմողը, վկայակոչելով Վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ ԿԴ2/0009/11/19 գործով կայացրած որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, նշում է, որ Վճռաբեկ դատարանը ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը չի դիտարկում մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության անմիջական առարկա՝ գտնելով, որ այդ խափանման միջոցի կիրառմամբ ինքնին չի սահմանափակվում անձի ազատ տեղաշարժվելու իրավունքը: Մինչդեռ, ըստ Դիմողի՝ նման եզրահանգումը հակասում է ինչպես Սահմանադրական դատարանի, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ սույն դիմումով ներկայացված դիրքորոշումներին:

Դիմողը եզրահանգում է. «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը ՀՀ վճռաբեկ դատարանի մեկնաբանությամբ և, ըստ այդմ, հաշվի առնելով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ ՀՀ Սահմանադրության 171-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված օրենքների և այլ նորմատիվ ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելու գործառույթով օժտված լինելը, իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ այնքանով, որքանով ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա է դիտարկվում միայն այն պարագայում, երբ մեղադրյալն ունի իրական շահագրգռվածություն լքելու իր մշտական

բնակության վայրը երկիրը կամ իրականում ձգտում է հեռանալ, սակայն վարույթն իրականացնող մարմնից չի ստանում թույլտվություն, հակասում է ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 75-րդ և 80-րդ հոդվածներին, 81-րդ հոդվածի 1-ին մասին»:

3. Պատասխանողի դիրքորոշումները

Ազգային ժողովը (այսուհետ՝ նաև պատասխանող), մասնավորապես, նշում է. «(...) միայն նախաքննության մարմինն է լիազորված ինքնուրույն որոշելու քննության ընթացքն ու ուղղությունը, բացահայտելու քրեական օրենսգրքով արգելված արարք կատարած անձին, պարզելու հանցանքի կատարման մեջ նրա մեղավորությունը և ապահովելու վերջինիս պատշաճ վարքագիծը, անհրաժեշտության դեպքում նաև նրա նկատմամբ կիրառելու դատավարական հարկադրանքի միջոց: Մինչդեռ դատարանը մինչդատական վարույթի նկատմամբ հետագա վերահսկողություն իրականացնելիս նման խնդիրներ չի հետապնդում: (...) այն դեպքում, երբ դատարանը դատական վերահսկողության առարկա դարձնի կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց /տվյալ դեպքում՝ ստորագրություն չհեռանալու մասին/ կիրառելու մասին որոշումը, ապա այն դուրս կգա մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության թույլատրելի շրջանակից և փաստացի կմիջամտի մինչդատական վարույթում նախաքննական մարմնի լիազորությունների կատարմանը:

(...)

(...) ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի կիրառումն ինքնին ուղղակիորեն չի հանդիսանում անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի խախտում և այդ սահմանափակումը բացարձակ բնույթ չի կրում: Մասնավորապես, օրենսդրի կողմից սահմանվել է՝ վարույթն իրականացնող մարմնի համապատասխան թույլտվության պայմաններում կիրառված սահմանափակման (արգելքի) ժամանակավոր վերացման հնարավորություն:

Ստացվում է, որ վարույթն իրականացնող մարմինը ընդհանուր կանոնով նախատեսում է սահմանափակում, սակայն այդ սահմանափակումը փաստացի

գործում է յուրաքանչյուր դեպքում, այն էլ այն պայմաններով, երբ անձը հնարավորություն ունի յուրաքանչյուր դեպքում թույլտվություն ստանալ և ժամանակավորապես սահմանափակման արգելքը վերացնել: Այսինքն, ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի կիրառման արդյունքում իրավական հետևանքը առաջանում է յուրաքանչյուր կոնկրետ դեպքում: Եվ հատկանշական է, որ օրենսդիրը նախատեսել է ընթացակարգ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ժամանակավորապես վերացնել կիրառված արգելքը:

Նման պայմաններում իրավաչափ է չհեռանալու մասին խափանման միջոցը մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա դիտարկել միայն այն պարագայում, երբ մեղադրյալն ունի իրական շահագրգռվածություն լքելու իր մշտական բնակության վայրը, երկիրը կամ իրականում ձգտում է հեռանալ, սակայն վարույթն իրականացնող մարմնից չի ստանում թույլտվություն: Նշված դեպքում առկա է իրավական հետևանքը և կարող է առկա լինել իրավունքի խախտման ենթադրյալ փաստը: Մինչդեռ, ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի վերացական կիրառումը ինքնին ուղղակիորեն չի հանգեցնում որևէ իրավունքի խախտման կամ սահմանափակման: Այն պայմաններում, երբ անձը հնարավորություն ունի յուրաքանչյուր դեպքում թույլտվություն ստանալ և ժամանակավորապես սահմանափակման արգելքը վերացնել:

Նշվածը քննարկելով նաև այն սկզբունքներից ելնելով, որ ազատ տեղաշարժվելու իրավունքը բացարձակ չէ և հետևաբար այն կարող է ենթարկվել նաև իրավաչափ սահմանափակումների, որոնք ուղղված են **ի շահ պետության անվտանգությանը, հասարակական կարգի պահպանմանը և հանցագործությունների կանխմանը, ինչպես նաև** մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս դատարանը չպետք է այնպիսի հարցեր քննարկի և դրանց վերաբերյալ որոշումներ ընդունի, որոնք կազմում են հետագա դատական քննության առարկան, հակառակ դեպքում **կխախտվի քրեական դատավարության փուլային կառուցվածքը, ինչպես նաև քրեադատավարական գործառույթների տարանջատման և դատարանի անկախության սկզբունքները**, գալիս ենք այն հետևության, որ բացակայում է վիճարկվող դրույթի

իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության՝ այնքանով, որքանով չեն նախատեսում ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության անմիջական առարկա լինելը, հակասահմանադրական ճանաչելու օբյեկտիվ հիմքերը և հիմնավորումները»:

4. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Սույն դիմումով վիճարկվող օրինադրույթի, այդ թվում՝ վերջինիս իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության սահմանադրականությունը պարզելու համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ, մասնավորապես, ներքոնշյալ հարցադրմանը.

- արդյոք ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի կիրառմամբ անձի ազատ տեղաշարժվելու հիմնական իրավունքին միջամտության պայմաններում վիճարկվող իրավակարգավորմանն իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ մինչդատական վարույթի փուլում ապահովվում է անձի՝ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված դատական պաշտպանության և վերջինիս բաղադրատարր հանդիսացող բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացումը:

Սահմանադրական դատարանը վիճարկվող օրինադրույթի, այդ թվում՝ վերջինիս իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության սահմանադրականությունը գնահատում է Սահմանադրության 40-րդ հոդվածին և 61-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխանության առումով:

5. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

5.1. Վիճարկվող օրինադրույթի, այդ թվում՝ վերջինիս իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության սահմանադրականությունը գնահատելիս Սահմանադրական դատարանը կարևորում է խափանման միջոցների քրեադատավարական բովանդակության բացահայտման հարցը: Օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *խափանման միջոցները* հարկադրանքի միջոցներ են,

որոնք կիրառվում են կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ՝ քրեական գործով վարույթի ընթացքում նրանց ոչ պատշաճ վարքագիծը կանխելու և դատավճռի կատարումն ապահովելու նպատակով: Օրենսգրքի հիշյալ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *խափանման միջոցներն են* կալանավորումը, գրավը, ստորագրությունը՝ չհեռանալու մասին, անձնական երաշխավորությունը, կազմակերպության երաշխավորությունը, հսկողության հանձնելը, հրամանատարության հսկողության հանձնելը: Օրենսգրքի 134-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված է, որ վերոնշյալ խափանման միջոցները չեն կարող կիրառվել մեկը մյուսի հետ կապակցված, բացառությամբ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի, որը կարող է կիրառվել գրավի, անձնական երաշխավորության և կազմակերպության երաշխավորության հետ կապակցված:

Օրենսդրական վերաբերելի կարգավորումների վերլուծությունից բխում է, որ խափանման միջոցների կիրառումը, ի թիվս այլնի, միտված է քրեական վարույթի շրջանակներում մեղադրյալի կամ կասկածյալի իրավաչափ վարքագիծն ապահովելուն և հանգեցնում է այդ միջոցների հասցեատիրոջ որոշ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման:

Օրենսգրքի դրույթների համակարգային վերլուծությունից հետևում է, որ քրեական դատավարության փուլերով և դրանց ներհատուկ խնդիրներով պայմանավորված՝ նախնական քննության ընթացքում վարույթն իրականացնող մարմինը յուրաքանչյուր դեպքում, հաշվի առնելով գործի քննության օպերատիվ-քննչական իրադրությունը, դրանից բխող դատավարական գործողություններ կատարելու նպատակահարմարությունը և անհրաժեշտությունը, ինքն է գնահատում կասկածյալի կամ մեղադրյալի կողմից ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու ռիսկը և, ըստ այդմ՝ որոշում է կայացնում խափանման միջոց ընտրելու, խափանման միջոցին ներհատուկ սահմանափակումները վերացնելու (օրինակ՝ պայմանների փոփոխություն) կամ, առհասարակ, կիրառված խափանման միջոցը վերացնելու մասին:

Օրենսգրքի 134-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով ամրագրված՝ ստորագրություն՝ չհեռանալու մասին խափանման միջոցի քրեադատավարական բովանդակությունը բացահայտված է Օրենսգրքի 144-րդ հոդվածում, որի 1-ին մասի համաձայն՝ չհեռանալու մասին ստորագրություն տված կասկածյալը կամ մեղադրյալը չի կարող առանց հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կամ դատարանի թույլտվության մեկնել այլ տեղանք կամ փոխել բնակության վայրը: Նա պարտավոր է ներկայանալ հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի և դատարանի կանչով և նրանց հայտնել իր բնակության վայրը փոխելու մասին:

Վերոնշյալը թույլ է տալիս փաստել, որ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը ենթադրում է կասկածյալի կամ մեղադրյալի կողմից *առանց* հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կամ դատարանի *թույլտվության այլ տեղանք մեկնելու կամ բնակության վայրը փոխելու ուղղակի արգելք*: Ավելին, մինչդատական վարույթի շրջանակներում նշված խափանման միջոցի ընտրությանը/կիրառմանը անձը *գրկվում է* առանց վարույթն իրականացնող մարմնի թույլտվության՝ *Հայաստանի Հանրապետության փարածքը լքելու հնարավորությունից, քանզի այդ խափանման միջոցի ընտրությանը/կիրառմանը և, ի ապահովումն դրա, սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգ կասկածյալի կամ մեղադրյալի անձնական տվյալների մուտքագրմամբ՝ անհնարին է դառնում նրա ելքը Հայաստանի Հանրապետության փարածքից*: Կառավարության՝ «Հայաստանի Հանրապետության սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգ ստեղծելու, դրա շահագործման կարգը և համակարգից օգտվողների ցանկը սահմանելու մասին» 2006 թվականի հունիսի 22-ի N 884-Ն որոշման 1-ին հավելվածի 5-րդ կետի «թ» ենթակետին համապատասխան՝ *Ոստիկանության բաժանորդային կետերից համակարգչային կապով ստացվող տվյալների ցանկում ներառված են իրավասու մարմնի կողմից «բացակայելու արգելք» («ստորագրություն չհեռանալու մասին» (մինչև 2022 թվականի հունիսի 30-ի N 996-Ն որոշումը գործող խմբագրությամբ)) խափանման միջոցը կիրառելու մասին տվյալները՝ խափանման միջոց կիրառելուց հետո՝ անհապաղ*:

Կառավարության «Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի նկարագիրը հաստատելու մասին» 1998 թվականի դեկտեմբերի 25-ի N 821 որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրության 19-րդ կետին համապատասխան՝ *մեղադրյալի անձնագիրը ժամանակավորապես վերցնում է նախաքննության մարմինը: Մեղադրյալի անձնագիրը պահվում է վարույթ իրականացնող պաշտոնատար անձանց մոտ և վերադարձվում է հարուցված քրեական հետապնդումը դադարեցվելուց հետո՝ անմիջապես:* Սահմանադրական դատարանը 2017 թվականի ապրիլի 4-ի ՍԴՈ-1360 որոշմամբ արձանագրել է, որ *անձնագիրը կասկածյալից կամ մեղադրյալից կարող է վերցվել բացառապես խափանման միջոցի կիրառման դեպքում:*

Սահմանադրական դատարանը հարկ է համարում ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցն ընտրելու մասին որոշման հետևանքով վրա հասնող քրեադատավարական ներգործության էությունը բացահայտել անձի՝ Սահմանադրության 40-րդ հոդվածով ամրագրված՝ ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակման լույսի ներքո: Սահմանադրության հիշյալ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *Հայաստանի Հանրապետության տարածքում օրինական հիմքերով գտնվող յուրաքանչյուր ոք ունի ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք:* Սահմանադրության նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու իրավունք:* Սահմանադրության 40-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված է, որ *ազատ տեղաշարժվելու իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու իրավունքը սահմանափակման ենթակա չէ:*

Ազատ տեղաշարժվելու սահմանադրական իրավունքը ներառում է Հայաստանի Հանրապետության տարածքում ազատորեն տեղաշարժվելու, *անխոչընդոտ* բնակության և/կամ գտնվելու վայր ընտրելու և/կամ այն փոփոխելու իրավունքը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գալու՝ անձի հայեցողությունը, այն ազատորեն իրացնելու հնարավորությունը: Միաժամանակ, նշված իրավունքը բացարձակ չէ. այն կարող է սահմանափակվել Սահմանադրությամբ սահմանված նպատակներով: Քրեական վարույթի շրջանակներում կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ ունեցող անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումը՝ խափանման միջոցի (այդ թվում՝ ստորագրությունը՝ չհեռանալու մասին) կիրառմամբ, ունի սահմանադրաիրավական հիմքեր, քանզի նպատակ է հետապնդում կանխելու կամ բացահայտելու հանցագործությունները, ինչպես նաև պաշտպանելու այլոց հիմնական իրավունքները և ազատությունները:

Վերոշարադրյալի լույսի ներքո բացահայտելով ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի կիրառման հետևանքով համապատասխան անձի համար առաջացող սահմանափակումները՝ հարկ է արձանագրել, որ *նշված խափանման միջոցի կիրառումն ուղղակիորեն սահմանափակում է անձի՝ Սահմանադրության 40-րդ հոդվածով երաշխավորված ազատ տեղաշարժվելու իրավունքը, քանզի՝*

- դրանով սահմանվում է այլ տեղանք մեկնելու կամ բնակության վայրը փոխելու ուղղակի արգելք և/կամ

- այլ տեղանք մեկնելու կամ բնակության վայրը փոխելու, որոշ դեպքերում նաև Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու համար անձը, որի նկատմամբ կիրառված է նշված խափանման միջոցը, անհրաժեշտաբար ձեռք է բերում իր այդ իրավունքի իրացման համար վարույթն իրականացնող մարմնի թույլտվությունը հայցելու և ստանալու պարտականություն: Ընդ որում՝ ազատ տեղաշարժվելու իրավունքը չվերականգնվող իրավունք է:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև ՄԻԵԴ) իր վճիռներում (որոշումներում) արձանագրել է անձի ազատ տեղաշարժվելու

իրավունքի սահմանափակումն այն դեպքում, երբ անձի վրա դրվում է որոշակի տեղանքը հատելու արգելք: ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ անձի կողմից յուրաքանչյուր անգամ թույլտվություն ստանալու պահանջը, որպեսզի վերջինս կարողանա լքել որոշակի տեղանքը, ինքնին, անձի ազատ տեղաշարժվելու իրավունքին միջամտություն է՝ անկախ նրանից, թե այդպիսի թույլտվություն տրվել է, թե ոչ: Դատարանը համաձայնել է դիմումատուի հետ, որ վիճարկվող միջոցը սահմանափակում է նրա ազատ տեղաշարժվելու իրավունքն այնպես, որ այն միջամտություն է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) թիվ 4 Արձանագրության 2-րդ հոդվածի իմաստով (*“Raimondo v. Italy”, Judgment of 22 February 1994, Series A no. 281-A, p. p. 19, § 39*): Դատարանը մերժել է Կառավարության այն փաստարկը, որի համաձայն՝ դիմումատուի ազատ տեղաշարժը չի սահմանափակվել, քանի որ նրան հեռանալու թույլտվություն է տրվել, և նրա նկատմամբ սանկցիա չի կիրառվել չարտոնված ելքի համար: *Դատարանը նշել է, որ իշխանություններից յուրաքանչյուր անգամ հեռանալու թույլտվություն հայցելու պարտավորությունը չի համապատասխանում «տեղաշարժի ազատություն» հասկացության իմաստին* (*“Ivanov v. Ukraine”, Application no. 15007/02, 07.12.2006, FINAL 07.03.2007, § 85*):

Ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի կիրառմամբ կարող են սահմանափակվել անձի նաև այլ հիմնական իրավունքներ/ազատություններ (սեփականության իրավունքը, ամուսնանալու ազատությունը, կրթության իրավունքը, հավաքների ազատությունը և այլն): Այդ առնչությամբ ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ կիրառված սահմանափակումը դիմումատուին թույլ չի տվել զբաղվել մասնագիտական գործունեությամբ, դիմումատուն չի շփվել իր հարազատների, ընտանիքի անդամների հետ, ինչը բացասաբար է ազդել վերջինիս մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության վրա (*“Niemiets v. Germany”, Application no. 13710/88, 16.12.1992, § 29’ ըստ Kotiy v. Ukraine, Application no. 28718/09, 05.03.2015, Final 05.06.2015, § 63*):

Ելնելով վերոնշյալից՝ Օրենսգրքով նախատեսված խափանման միջոցների համակարգում ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցն անձի ոչ պատշաճ վարքագիծը կանխելու ենթադրաբար ամենամեղմ միջոցից, կախված հանգամանքներից (ում նկատմամբ է կիրառվում նշված խափանման միջոցը՝ հաշվի առնելով անձի մասնագիտական գործունեությունը, զբաղմունքը, ընտանեկան դրությունը, առողջական վիճակը և այլն), կարող է վերաճել սահմանափակման առավել ինտենսիվ միջոցի՝ մարդու ազատ տեղաշարժվելու իրավունքից զատ՝ սահմանափակելով նաև այլ հիմնական իրավունքներ և ազատություններ:

Այդ առնչությամբ իրավակիրառ պրակտիկան որպես ուղենիշ պետք է ընդունի այն մոտեցումը, որ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի կիրառումն ուղղակիորեն միջամտում է անձի ազատ տեղաշարժվելու սահմանադրական իրավունքին, դրա կիրառումը ենթադրում է անձի՝ այլ տեղանք մեկնելու կամ բնակության վայրը փոխելու, նաև Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու իրավունքի սահմանափակում. հետևաբար՝ ցանկացած խափանման միջոց, մասնավորապես՝ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը, պետք է կիրառվի Օրենսգրքով դրա պայմանների և հիմք(եր)ի առկայության պայմաններում միայն՝ երաշխավորելով հիմնական իրավունքին/ազատությանը միջամտության իրավաչափությունը և դրանով իսկ բացառելով հիմնական իրավունքի/ազատության խախտումները:

Նկատի առնելով ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի՝ մարդու առանձին հիմնական իրավունքներին և ազատություններին ներգործության բնույթն ու բովանդակությունը, դրանից ծագող հետևանքները՝ հարկ է արձանագրել, որ վարույթն իրականացնող մարմնի՝ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը կիրառելու հայեցողությունը բացարձակ չէ: Յուրքանչյուր դեպքում հիշյալ խափանման միջոցն ընտրելիս/կիրառելիս վարույթն իրականացնող մարմինը պետք է կայացնի պատճառաբանված որոշում՝ վերջինիս շրջանակներում հստակ անդրադառնալով խափանման միջոցի կիրառման պայմանների և հիմքերի առկայությանը և դրա կիրառման անհրաժեշտությանը՝ հիմք

ընդունելով քրեական գործում առկա համապատասխան նյութերը: Միայն այդպիսի մոտեցման պայմաններում կապահովվի հանրային և մասնավոր շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը, կբացառվի, մասնավորապես, անձի ազատ տեղաշարժվելու իրավունքին նշված խափանման միջոցի կիրառմամբ ոչ իրավաչափ միջամտությունը:

Օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունից բխում է, որ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի կիրառման համար նախատեսված են որոշակի պայմաններ և հստակ հիմքեր՝ այն կարող է կիրառվել *միայն մեղադրյալի (կասկածյալի) դատավարական կարգավիճակ ունեցող անձի նկատմամբ* և *միայն Օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ խափանման միջոց կիրառելու հիմքերի առկայության պայմաններում*:

Այդ համատեքստում, խափանման միջոցները, առաջին հերթին, միտված են մեղադրյալի (կասկածյալի) պարտականությունները պատշաճ կատարելուն, նրա կողմից իրավաչափ վարքագիծ ապահովելուն: Այդուհանդերձ, յուրաքանչյուր դեպքում անթույլատրելի է խափանման միջոցի կիրառումը բացառապես ստանձնած դատավարական պարտականությունների կատարումը երաշխավորելու նպատակով, եթե առկա չէ գործի նյութերից բխող ողջամիտ ենթադրություն առ այն, որ դրանք չեն կատարվի: Եվ հակառակը՝ քրեական հետապնդման (ձևական առումով քրեական հետապնդման հարուցման) հարուցմամբ ծագած դատավարական կարգավիճակով պայմանավորված և ըստ այդմ՝ միայն մեղադրյալի (կասկածյալի) դատավարական պարտականությունների, այդ թվում՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով ներկայանալու, դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի, դատավորի իրավաչափ կարգադրություններին ենթարկվելու պարտականությունների առկայության փաստով պայմանավորված՝ անձի նկատմամբ խափանման միջոցի կիրառումն անթույլատրելի է, քանի որ նման մոտեցումը կհանգեցնի միայն մեղադրյալի (կասկածյալի) դատավարական կարգավիճակի ձեռքբերմամբ պայմանավորված՝ անձի հիմնարար իրավունքների և ազատությունների ինքնաշխատ սահմանափակման, ինչն անհարիր է իրավական պետության սահմանադրական սկզբունքի և անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի (նշված

խափանման միջոցի կիրառման հետևանքով սահմանափակվող այլ հիմնական իրավունքների/ազատությունների) երաշխավորման համատեքստում:

5.2. Նկատի ունենալով, որ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի կիրառումը ենթադրում է ուղղակի միջամտություն անձի ազատ տեղաշարժելու իրավունքին (նաև այլ հիմնական իրավունքներին և ազատություններին միջամտության հնարավորությամբ), նման պայմաններում *պետք է երաշխավորվի անձի՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի պատշաճ հրացումը*: Այդ առնչությամբ առանցքային կարևորություն է ձեռք բերում վիճարկվող նորմին՝ իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության սահմանադրականության գնահատումը՝ *արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի երաշխավորման համատեքստում՝ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը կիրառելու որոշման անմիջական դատական բողոքարկումը բացառող մոտեցման* պայմաններում: Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Սահմանադրական դատարանը բազմիցս անդրադարձել է *դատական պաշտպանության իրավունքի* բովանդակությանը՝ այդ առնչությամբ, մասնավորապես, արտահայտելով ներքոնշյալ իրավական դիրքորոշումները.

- «Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից» (2007 թվականի նոյեմբերի 28-ի ՍԴԴ-719).

- «(...) դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ

իրացման հնարավորությունը, իմաստագրվել << Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ» (2015 թվականի դեկտեմբերի 22-ի ՍԴՈ-1249)։

- «Դատարան դիմելու՝ անձի իրավունքի իրացման երաշխավորումն իրավական առաջնահերթ նախապայման է անձի սահմանադրական իրավունքներն ու ազատությունները դատական կարգով պաշտպանելու համար» (2016 թվականի մարտի 10-ի ՍԴՈ-1257)»:

Օրենսգրքի 290-րդ հոդվածը վերաբերում է հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների անօրինական և անհիմն որոշումների և գործողությունների բողոքարկմանը դատարան, սակայն չի հստակեցնում մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկան:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործառույթների, առանձնահատկությունների, խնդիրների և նպատակների վերաբերյալ Սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի դեկտեմբերի 7-ի ՍԴՈ-844 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, մասնավորապես, հանգում են հետևյալին. «(...) հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքների քննությունը, որպես մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործառույթ, ունի իր առանձնահատուկ խնդիրներն ու նպատակները, մասնավորապես՝ բողոքարկվող որոշումների և գործողությունների օրինականությունը (<< քրեական դատավարության օրենսգրքի և օրենսդրության այլ ակտերի պահանջներին համապատասխանությունը) ստուգելու արդյունքում **պարզել անձի** (կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության այլ մասնակցի կամ այլ անձի) **իրավունքների և ազատությունների խախտման փաստը** և կայացնել համապատասխան որոշում՝ անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության, կամ բողոքը մերժելու վերաբերյալ:

(...)

«Քրեական դատավարության օրենսգրքի 41 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի և 290 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ինչպես դատախազը, այնպես էլ դատարանն իրավասու են քննելու վերոհիշյալ մարմինների, այդ թվում՝ նաև դատախազի՝ «Քրեական դատավարության օրենսգրքում նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր լինելու դեմ բերված բողոքները: Սակայն տարբեր են այդ բողոքների քննության արդյունքում խախտված իրավունքի վերականգնման եղանակները, ձևերը և իրավական հետևանքները, մասնավորապես, դատական վերահսկողությունն իրականացվում է **անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու իրավասու մարմնի (պաշտոնատար անձի) պարտականության մասին որոշման կայացմամբ:** Հետևաբար, դրանով է պայմանավորված նաև «Քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 5-րդ մասի նորմատիվ պահանջը, որին համապատասխան բողոք քննելու արդյունքում դատարանն անձի խախտված իրավունքը և ազատությունը վերականգնում է ոչ թե հետաքննության մարմնին, քննիչին և օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմնին դատավարական որոշակի գործողություններ կատարելու ցուցում տալով կամ նրանց որոշումները վերացնելով, ինչպես տեղի ունի դատախազական հսկողության դեպքում, այլ այդ մարմինների ու պաշտոնատար անձի կողմից թույլ տրված օրինախախտումը վերացնելը և անձի խախտված իրավունքներն ու ազատությունները վերականգնելը **պարտավորեցնելով**, որը բխում է դատական իշխանության սահմանադրաիրավական բովանդակությունից և դրան համապատասխան՝ «Քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դատարանի լիազորություններից»:

Որպես ելակետ ընդունելով մարդու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության գերակայությունը՝ օրենսդիրը սահմանել է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործիքակազմը: Մինչդատական վարույթի փուլում, ի թիվս այլնի, դատարանի առաջնահերթ

խնդիրներից է ապահովել դատավարության մասնավոր մասնակիցների հիմնական իրավունքների կենսագործումը և անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը՝ պետական մարմինների անօրինական (ոչ իրավաչափ) որոշումներից և գործողություններից (անգործությունից), իսկ վարույթի հանրային մասնակիցների անօրինական գործողությունների/անգործության կամ որոշումների հետևանքով հիմնական իրավունքների խախտման պարագայում՝ ապահովել խախտված իրավունքների վերականգնումը:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը ենթադրում է նաև Օրենսգրքի 290-րդ հոդվածով սահմանված մարմինների՝ օրենքով նախատեսված որոշումների ու գործողությունների/անգործության դեմ բերված բողոքների շրջանակներում դրանց օրինականության և հիմնավորվածության ստուգում: Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը զսպող միջոց է՝ քրեական հետապնդման մարմինների հնարավոր կամայական մոտեցումների կանխարգելման համատեքստում, ապահովում է խախտված իրավունքների արագ և արդյունավետ վերականգնման հնարավորությունը:

Վերաքննիչ քրեական դատարանի՝ 2022 թվականի հուլիսի 21-ի որոշման (Հ. Մամիջանյանի պաշտպանի կողմից բերված վերաքննիչ բողոքը մերժվել է. թիվ ԵԴ/0753/11/21 գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի հոկտեմբերի 14-ի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ) մեջ, մասնավորապես, նշված է. «Վերաքննիչ դատարանը, վերահաստատելով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դիրքորոշումը, փաստում է, որ վարույթն իրականացնող մարմնի վերոնշյալ որոշումը չի հանդիսանում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով իրականացվող դատական վերահսկողության առարկա: Վերոնշյալ իրավական վերլուծությունների հիման վրա պետք է արձանագրել, որ քննարկվող որոշման օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումը հնարավոր է գործն ըստ էության քննության ժամանակ: Քննարկվող որոշման բողոքարկումը դատավարության ավելի ուշ փուլում չի կարող հանգեցնել անձի իրավունքների և օրինական շահերի անհամարժեք սահմանափակման,

հետևաբար՝ սույն պարագայում, ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոց ընտրելու մասին որոշումը չի կարող հանդիսանալ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա»:

Սույն գործով քննության առարկա հարցի առնչությամբ, թիվ ԿԴ2/0009/11/19 գործով Վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի դեկտեմբերի 27-ի որոշման մեջ, մասնավորապես, նշված է. «(...) Վճռաբեկ դատարանը փաստում է, որ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը որպես մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա դիտարկելու հարցի կապակցությամբ առկա է հակասական իրավակիրառ պրակտիկա:

(...)

(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով օրենսդրի կողմից սահմանված խափանման միջոցների համակարգում՝ չհեռանալու մասին ստորագրությունն ունի անձի իրավունքների նկատմամբ նվազ միջամտություն: Վերջինս պայմանավորված է այն հանգամանքով, որ չհեռանալու մասին ստորագրությունն ըստ էության արտահայտում է գրավոր եղանակով ամրագրված անձի «խոստումն» առ այն, որ նա պարտավորվում է իր նկատմամբ իրականացվող քրեական հետապնդման ժամանակահատվածում գտնվել վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ: Այն հոգեբանական հարկադրանքի միջոց է, որը գրավոր եղանակով տրված՝ չբացակայելու «խոստման» ուժով կաշկանդում է մեղադրյալին **մեկնել այլ տեղանք կամ փոխել բնակության վայրը՝ առանց վարույթն իրականացնող մարմնի թույլտվության:** Ուստի, ի տարբերություն ֆիզիկական հարկադրանքի միջոցների, օրինակ՝ անձի ազատության իրավունքը սահմանափակող՝ կալանավորում խափանման միջոցի, չհեռանալու մասին ստորագրությունը, որպես խափանման միջոց, ինքնին չի հանգեցնում անձի հիմնարար իրավունքի խախտման:

Նման պայմաններում, նկատի ունենալով, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կառուցակարգը գործադրվում է անձի

առերևույթ խախտված իրավունքների առկայության դեպքում՝ խախտումը վերացնելու նպատակով, իսկ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը կամ անձի՝ չհեռանալու մասին «խոստումը» ինքնին չի վկայում այդպիսի խախտման առերևույթ առկայության մասին, այն չի կարող դառնալ մինչդաստական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա:

(...)

(...) Վճռաբեկ դատարանը կարևոր է համարում անդրադառնալ կոնկրետ վերահսկողության այն դեպքերին, երբ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի կիրառմամբ սահմանափակվում է անձի՝ այլ տեղանք մեկնելու, մշտական բնակության վայրը փոխելու կամ ՍԷԿՏ համակարգում համապատասխան տվյալների մուտքագրմամբ անձի՝ ՀՀ պետական սահմանը հատելու հնարավորությունը՝ հանգեցնելով անձի՝ ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակման: Այս դեպքերում, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (...) վկայակոչված իրավական դիրքորոշումներին համապատասխան, առաջ է գալիս անկախ, անաչառ և օրինական երաշխիքների ապահովմամբ՝ կոնկրետ վերահսկողության համատեքստում կիրառված սահմանափակման իրավաչափությունը դատական ստուգման ենթարկելու և իրավական պաշտպանություն հայցելու անհրաժեշտություն: Այլ կերպ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ պարագայում անձն իրավասու է բարձրացնել իր նկատմամբ կիրառված արգելքի իրավաչափության հարցը՝ մինչդաստական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կառուցակարգի գործադրման համար անհրաժեշտ պայմանի՝ անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի առերևույթ խախտման առկայության ուժով:

(...)

(...) Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև ինչպես կալանավորումը, այնպես էլ չհեռանալու մասին ստորագրությունը ներառված են քրեադատավարական խափանման միջոցների նույն համակարգում և միտված են միևնույն նպատակին՝ անձի ոչ պատշաճ վարքագծի կանխմանը, սակայն, ելնելով դրանց ներգործության բնույթից, աստիճանից և վրա հասնող հետևանքներից, դրանց

կիրառմանը ներկայացվող պահանջներն անհամեմատելիորեն տարբեր են: Այսպես, եթե կալանքի դեպքում՝ ելնելով անձի ազատության հիմնարար իրավունքի պաշտպանությունից ու ազատության իրավունքի կանխավարկածից, պահանջվում են ծանրակշիռ հիմնավորումներ դրա կիրառումն արդարացնելու համար, ապա չհեռանալու մասին ստորագրության կիրառումն այդպիսի հիմնավորումներ չի պահանջում: Դրա կիրառման անհրաժեշտությունը ծագում է քրեական հետապնդման ներքո գտնվելու ուժով՝ կատարման ենթակա քննչական և դատավարական գործողություններին մասնակցելու, վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ գտնվելու նպատակով: Այլ կերպ, այն վարույթն իրականացնող մարմնի կանչով ներկայանալու պարտավորության իրականացման երաշխիք է»:

Անդրադառնալով ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը ընտրելու մասին որոշման՝ դատական վերահսկողության առարկա լինելու հարցի շրջանակներում *ձևավորված իրավակիրառ պրակտիկային՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ այն խնդրահարույց է, քանզի կարող է ուղղորդել դեպի իրավական պետության և մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից վրանգավոր և բացառելի այն հունը, թե անձի՝ մեղադրյալի (կասկածյալի) դատավարական կարգավիճակը, ինքնին, բավարար հիմք է անձի նկատմամբ նշված խափանման միջոցն ընտրելու/կիրառելու համար, քանի որ այդ կարգավիճակով պայմանավորված՝ անձի համար առաջ է գալիս կատարման ենթակա քննչական և դատավարական գործողություններին մասնակցելու, վարույթն իրականացնող մարմնի կանչով ներկայանալու պարտավորություն:*

Դատարանների կողմից սույն գործով վիճարկվող նորմին տրված մեկնաբանության պայմաններում, ըստ էության, բացառվում է համապատասխան որոշման դատական անմիջական բողոքարկման հնարավորությունը (առաջարկվում է ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցն ընտրելու մասին որոշման իրավաչափությունը քննության առարկա դարձնել հետաձգված բողոքարկման գործիքակազմով):

Այդ համատեքստում կարևորվում են նաև դատական պաշտպանության իրավունքի բաղադրատարր հանդիսացող բողոքարկման իրավունքի վերաբերյալ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները: Այդ առնչությամբ Սահմանադրական դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 8-ի ՍԴՈ-936 որոշման մեջ, մասնավորապես, նշված է. «Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատական բողոքարկման ինստիտուտի կարգավորման և գործադրման հիմքում պետք է իրացվեն հետևյալ առաջնահերթ իրավապայմանները, մասնավորապես.

- անձի հիմնական իրավունքներն ու ազատությունները՝ որպես բարձրագույն արժեք, դատարանների կողմից ենթակա են անվերապահ պաշտպանության կոնկրետ գործի ինչպես ըստ էության քննության, այնպես էլ հնարավոր հետագա վերաքննության շրջանակներում,

- դատական բողոքարկումը, որպես դատական պաշտպանության եղանակ, պետք է արդյունավետ միջոց ծառայի վերականգնելու անձի խախտված իրավունքներն ու ազատությունները՝ պահպանելով արդարադատության իրականացման սահմանադրական սկզբունքները (...),

- դատական բողոքարկման ինստիտուտը, առանց բացառության, պետք է միջոց հանդիսանա հավասարության պայմաններում, օբյեկտիվ, բազմակողմանի, արդար և հրապարակային դատաքննության արդյունքում, ողջամիտ ժամկետներում բացահայտելու և շտկելու դատական բոլոր այն սխալները, որոնք թույլ են տրվել ինչպես նյութական, այնպես էլ դատավարական իրավունքի նորմերի խախտման արդյունքում, հետևաբար հանգեցրել են դատական գործի սխալ լուծմանը, (...):»:

Սահմանադրական դատարանը 2010 թվականի նոյեմբերի 2-ի ՍԴՈ-922 որոշմամբ անդրադարձել է դատական պաշտպանության իրավունքի բաղադրատարր հանդիսացող բողոքարկման իրավունքի իրացման հարցին՝ անմիջական և հետաձգված բողոքարկման շրջանակներում՝ մասնավորապես արձանագրելով. «(...) օրենսդիրը տարբերակում է միջանկյալ դատական ակտերի բողոքարկման երկու հիմնական կարգ, այն է՝ բողոքարկում գործն ըստ էության լուծող դատական

ակտի բողոքարկման շրջանակներում՝ «հետաձգված բողոքարկում», և միջանկյալ դատական ակտի անմիջական բողոքարկում: Եթե վարույթի հետագա ընթացքը կասեցնող միջանկյալ դատական ակտի դեմ իրավական պաշտպանության միակ հնարավոր միջոցը դրա անմիջական բողոքարկումն է և ըստ այդմ օրենսդրից պահանջվում է նախատեսել տվյալ ակտի անմիջական բողոքարկման կարգ, ապա չկասեցված և շարունակվող վարույթի ընթացքում ընդունված միջանկյալ դատական ակտի բողոքարկման նշված երկու կարգերի միջև ընտրությունն օրենսդրի հայեցողության շրջանակում է»:

Վերոնշյալի լույսի ներքո, ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցն ընտրելու մասին վարույթն իրականացնող մարմնի որոշման՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա լինելու հարցի առնչությամբ *Սահմանադրական դատարանը գտնում է, որ նշված որոշումը պետք է հանդիսանա անմիջական բողոքարկման առարկա՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում՝ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի ընտրության/կիրառման հետևանքով սահմանակազմի՝ անձի ազատ տեղաշարժվելու սահմանադրական իրավունքի (նաև այլ հիմնական իրավունքների/ազատությունների սահմանակազմման հնարավորությամբ) դատական պաշտպանության արդյունավետությունն ապահովելու համար:*

Վերոնշյալ մոտեցումը հիմնավորվում է նրանով, որ պայմանավորված քրեական դատավարության փուլային այն տրամաբանությամբ, որի համաձայն՝ քրեական վարույթի փուլից փուլ անցման պայմաններում վարույթն իրականացնող մարմինը կրկին որոշում է խափանման միջոց կիրառելու, փոփոխելու, վերացնելու, այն պահպանելու հարցերը, այսինքն՝ քրեական վարույթի փուլից փուլ անցմամբ պայմանավորված՝ նշված հարցերի լուծումը ենթադրում է, ըստ էության, նոր որոշում՝ խափանման միջոցի կիրառման հարցի վերաբերյալ, մինչդատական վարույթի շրջանակներում անձի նկատմամբ կիրառված ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի հետաձգված բողոքարկումը, ըստ էության, հանգեցնելու է նրան, որ դատական ակտով ստուգվելու է նախորդ փուլում կիրառված և տվյալ պահին իրավական հետևանքներ չառաջացնող որոշման իրավաչափությունը:

Քրեական վարույթի տևողությունը սահմանափակված չէ ժամկետներով, որպիսի պարագայում հետաձգված բողոքարկման գործիքակազմի կիրարկումը կարող է խիստ անարդյունավետ լինել՝ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցն ընտրելու մասին վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ սահմանափակվող հիմնական իրավունքների/ազատությունների պաշտպանության առումով: Նման պայմաններում չի բացառվում, որ անձին մինչդարական վարույթի շրջանակներում ոչ իրավաչափորեն սահմանափակված իր, մասնավորապես, ազատ տեղաշարժելու իրավունքի դատական պաշտպանության իրական հնարավորություն ընձեռվի նշված իրավունքի ենթադրյալ խախտման պահից տևական ժամանակ անց:

Բացի դրանից, նշված խափանման միջոցի կիրառման անմիջական բողոքարկման հնարավորությունը բացառող մեկնաբանությունն այն պայմաններում, երբ մեղադրյալի (կասկածյալի) նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվի և քրեական գործի վարույթը կարճվի, այլ կերպ՝ վարույթն ավարտվի մինչդարական փուլում՝ չթևակոխելով դատական քննության փուլ, գործնականում կարող է հանգեցնել այնպիսի իրավիճակի, երբ անձն ընդհանրապես կզրկվի իր խախտված իրավունքների/ազատությունների դատական պաշտպանության հնարավորությունից: Հիշյալ մոտեցմանը հարող դիրքորոշում է ձևավորել ՄԻԵԴ-ը՝ նշելով, որ դատական քննության փուլում կամ գործն ըստ էության լուծող դատական ակտը բողոքարկելու արդյունքում քննիչի [ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոց կիրառելու] որոշման իրավաչափությունը քննարկելը հանգեցնում է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտման, քանի որ նման պայմաններում ներպետական օրենսդրությունը չի ապահովում բավարար երաշխիքներ կամայական խափանման միջոցներ կիրառելու դեմ բողոք ներկայացնելու համար (...): Քննության նման ընթացքում [դիմումատուի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել, իսկ քրեական գործի վարույթը կարճվել է] դատական վերահսկողությունն անհասանելի է եղել, ուստի՝ բողոքը դատարան ներկայացնելու հնարավորություն դիմումատուն չի ունեցել: Ավելին՝ ամբողջ նախաքննության ընթացքում դիմումատուն հնարավորություն չի ունեցել այլ եղանակներով իրացնել դատական

պաշտպանության իր իրավունքը, ինչի արդյունքում չի կարողացել դատարանից պահանջել, որ որոշում կայացվի քննիչի որոշման իրավաչափության, համաչափության, ինչպես նաև խափանման միջոցը վերացնելու մասին (“Kotiy v. Ukraine”, Application no. 28718/09, 05.03.2015, Final 05.06.2015, § 69-70):

Համաձայն սույն դիմումին կից ներկայացված նյութերի՝ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնի հատկապես կարևոր գործերով ավագ քննիչի՝ 2021 թվականի նոյեմբերի 4-ի որոշմամբ մերժվել է թիվ 15971020 քրեական գործով մեղադրյալ Հ. Մամիջանյանի պաշտպանի միջնորդությունը, որը վերաբերում էր Հ. Մամիջանյանին նույն թվականի նոյեմբերի 11-ից 15-ը արտերկիր մեկնելը թույլատրելուն («(...) նախաքննության ներկա փուլում վարույթն իրականացնող մարմինը չի կարող թույլատրել մեղադրյալ Հայկ Մամիջանյանին մեկնել այլ տեղանք (...))»:

Վերոշարադրյալը հիմք է տալիս եզրահանգելու, որ հիշատակված սահմանադրաիրավական արժեքների հետ անհամապեղելի է իրավակիրառ պրակտիկայում ձևավորված մեկնաբանությունը՝ հետաձգված բողոքարկման հնարավորության մատնանշմամբ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցն ընտրելու մասին վարույթն իրականացնող մարմնի որոշման անմիջական բողոքարկման բացառումը. անձի համար պետք է երաշխավորվի ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի ընտրության/կիրառման արդյունքում իր ազատ փեղաշարժվելու սահմանադրական իրավունքի (այդ որոշմամբ սահմանափակվող այլ իրավունքների և ազատությունների) սահմանափակման իրավաչափությունը գնահատելու հարցով մինչդատարանական վարույթի փուլում դատարան դիմելու իրավունքը:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ օրենսդիրը, 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված և 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 299-րդ հոդվածով սահմանելով մինչդատարանական ակտերի իրավաչափության դատական երաշխիքների շրջանակը, դատական բողոքարկման ենթակա մինչդատարանական ակտերի շարքում նախատեսել է նաև խափանման միջոց կիրառելու մասին որոշումը (հիշյալ հոդվածի 1-ին

մասի 6-րդ կետ)՝ այդպիսով օրենսդրական զարգացումներն ուղղորդելով վերը ուրվագծված տրամաբանությամբ:

Ողջ վերոնշյալի հաշվառմամբ **Սահմանադրական դատարանը գտնում է, որ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցն ընտրելու մասին վարույթն իրականացնող մարմնի որոշման անմիջական բողոքարկումը չպետք է բացառվի. դատական պրակտիկան պետք է առաջնորդվի այն մոտեցմամբ, որ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցն ընտրելու մասին վարույթն իրականացնող մարմնի որոշումները ենթակա են դատական կարգով անմիջական բողոքարկման մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում՝ առաջնորդվելով անձի՝ ազատ տեղաշարժվելու իրավունքին (համապատասխան որոշմամբ սահմանափակվող նաև այլ իրավունքներին և ազատություններին) միջամտության իրավաչափությունը վիճարկելու, դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումն ապահովելու հրամայականով:**

Ելնելով գործի քննության արդյունքներից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, 170-րդ հոդվածի 1-ին և 4-5-րդ մասերը, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որի համաձայն՝ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցն ընտրելու մասին վարույթն իրականացնող մարմնի որոշումն օրենքով սահմանված կարգով ենթակա է բողոքարկման դատարան:

2. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնա-

կան դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով, քանի որ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասը դիմողի նկատմամբ կիրառվել է սույն որոշմամբ տրված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ



Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

30 մայիսի 2023 թվականի
ՍԴՈ-1690